

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(Օ. ՈՒԱՅԼԴԻ «ԴՈՐԻԱՆ ԳՐԵՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊԻ
ՆՅՈՒԹԻ ՅԻՄԱՆ ՎՐԱ)

Նախկինում պարագա ստորադաս նախադասությունների վերլուծությունը չի ներառել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են հաղորդակցության կազմակերպումն ու բովանդակությունը, խոսողի կամ լսողի հաղորդակցական մտադրությունը կամ գործաբանական պատճառաբանվածությունը: Բայց վերջին շրջանում լեզվաբաններն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում նախադասության առկայական տրոհման հիմնախնդրին:

Նախադասության առկայական տրոհման տեսանկյունից պարագա ստորադաս նախադասության վերլուծություններ կատարվել են մի շարք լեզվաբանների կողմից, այդ թվում՝ Haiman (1978), Chafe (1984): Firbas, Thomson 1983 և ուրիշներ: Այնուամենայնիվ այդ ուսումնասիրությունները հաճախ կատարվել են մեկ լեզվի շրջանակներում: Այս առումով կարևորվում է նախադասության առկայական տրոհման համահարաբերակցության հիմնախնդիրը տարբեր քերականական կառուցվածքով լեզուներ համեմատելիս, տվյալ դեպքում՝ հայերեն և անգլերեն: Յետաքրքիր է պարզել, թե ինչպես է անգլերեն պարագա ստորադաս նախադասության շարադասական կառույցն իր կառուցվածքա-իմաստային արտահայտությունը գտնում հայերենում: Այդ նպատակով կատարվել է Օսկար Ուայլդի-ի «Դորիան Գրեյի դիմանկարը» ստեղծագործության բնագրի և հայերեն թարգմանության վերլուծություն՝ պարզելու, թե ինչպես են այդ ստեղծագործության մեջ ընդգրկված պարագա ստորադաս նախադասություններն իրենց արտահայտությունը գտել գրքի հայերեն թարգմանության մեջ: Յետաքրքիր է նաև զուգադրել և պարզաբանել, թե արդյոք պահպանվում է տվյալ նախադասության բարդ ստորադասական կառույցը հայերենում, վերածվում է այն երկու առանձին նախադասությունների, թե՞ դառնում պարզ ընդարձակ նախադասություն և ինչպես է լուծվում նույն նախադասության առկայական տրոհման խնդիրը վերլուծական և համադրական կառուցվածքի երկու տարբեր լեզուներում: Ուսումնասիրության արդյունքում փորձ է կատարվել լուսաբանելու, թե ստորադաս նախադասության որ տեսակի դեպքում են դրսևորվում թեմա - ռեմային կառույցների նմանությունները և տարբերությունները անգլերեն և հայերեն լեզուներում:

Այսպիսով՝ կատարվել է փոքրիկ ուսումնասիրություն՝ հիմքում ունենալով հիսուն պարբերություն՝ «Դորիան Գրեյի դիմանկարը» բնագրից՝ համապատասխան հայերեն թարգմանված պարբերություններով: Այդ պարբերություններում հիմնականում ուշադրության են արժանացել ժամանակի, պայմանի, պատճառի պարագա ստորադաս նախադասությունները: Առանձնացվել

են մաս որոշ բարդ ստորադասական և բարդ համադասական նախադասություններ, որոնք թարգմանության ժամանակ պահպանել կամ փոխել են իրենց տեսակը, կառուցվածքը, ոճական նկարագիրը: Քննվել են մաս դերբայական դարձվածով արտահայտված պարզ ընդարձակ նախադասություններ, որոնք բնագրի կամ համապատասխան հայերեն թարգմանության մեջ հանդես են եկել որպես այս կամ այն տեսակի պարագա ստորադաս նախադասություններ:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ նշված պարագա ստորադաս նախադասությունների քիչ տոկոսն է իր կառուցվածքահմաստային լիարժեք, ճշգրիտ արտահայտությունը գտել հայերեն թարգմանության մեջ: Այսպես՝ 50 պարբերության մեջ ընդգրկված 58 պարագա ստորադաս նախադասություններից միայն 11-ն են թարգմանության ժամանակ լիովին պահպանել իրենց իմաստային կառուցվածքային, ոճական հատկանիշները՝ չկորցնելով խոսողի հաղորդակցական միտումը, պահպանելով թեմա - ռեմային կապը:

Դիտարկենք օրինակներից մեկը.

When I like people immensely I never tell their name to anyone. It is like surrendering a part of them.

Երբ ես մեկին չափազանց սիրում եմ, երբեք չեմ տալիս նրա անունը: Դա միևնույն է, թե ուրիշներին տաս քեզ համար շատ թանկ մարդու ինչ - որ մասնիկը:

Ընդ որում նշված 11 օրինակներից, որոնք կազմում են ուսումնասիրության ենթակա նախադասությունների 19.6%-ը, ոչ բոլորն են գտել իրենց ճշգրիտ, համարժեք կառուցվածքահմաստային արտահայտությունը հայերեն թարգմանության մեջ: Երբեմն թարգմանիչը ստիպված է եղել դիմել լեզվի մեջ առկա շարահյուսական, իմաստային և քերականական նրբություններին՝ ձգտելով առավելագույնս փոխանցել հեղինակի կամ կերպարի հաղորդակցական միտումը, նրա տրամադրությունը, հուզական վիճակը:

Time is jealous of you and wars against your lilies and your roses. You will become shallow and hollow - checked and dull - eyed. You will suffer horribly... Ah! realize your youth while you have it.

Ժամանակը խանդոտ է, նա պայքարում է այն շուշանների և վարդերի դեմ, որոնք աստվածներու պարզել են ձեզ /բնագրում այս միտքը բացակայում է/: Ձեր այտերը կդալկանան ու փոս կընկնեն, ձեր աչքերի հուրը կմարի: Դուք կսկսեք սարսափելի տանջվել... Օգտվե՛ք, ուրեմն, ձեր երիտասարդությունից, քանի դեռ ուշ չէ:

Ակնհայտ է, որ հայերենում միտքը պարզ, հասկանալի և արտահայտիչ դարձնելու համար ավելացվել է «որոնք աստվածները պարզել են ձեզ» միտքը, այլապես կտուժեր խոսողի հաղորդակցական միտումը, և թերի կմնար այն իմաստը, բովանդակությունը և հաղորդակցական արժեքը, որ նա դրել էր իր խոսքի մեջ: Այդ նպատակով փոխվել է մաս ստորադաս նախադասության մեջ բառերի ընտրությունը անգլերենում՝ "... while you have it", իսկ հայերենում՝ «...քանի դեռ ուշ չէ»:

Մեկ այլ օրինակում բնագրում ստորադաս նախադասության մեջ ընտրված է կրավորական կառույց, որը շատ տիպիկ և բնորոշ է անգլերեն լեզվին, իսկ հայերենում այն թարգմանվել է ներգործական կառույցի նախադասությամբ:

... as in that case it will not be coloured by either his wants, his desires or prejudices.

... որովհետև այդ գաղափարը չի առտազույցում նրա ցանկությունները, կարիքները և նախապաշարումները:

Իհարկե, այստեղ մեծ նշանակություն են ունեցել 2 լեզուների կառուցվածքային, շարահյուսական, քերականական առանձնահատկությունները, որոնք տալիս են սահմանափակ հնարավորություններ՝ պահպանելու նախադասության հաղորդակցական արժեքը առանց կառուցվածքային, իմաստաբանական կամ ոճական փոփոխությունների:

Այժմ դիտարկենք վերոհիշյալ կառուցվածքաիմաստաբանական փոփոխությունները՝ հաշվի առնելով պարագա ստորադաս նախադասության

1. տեսակը

2. դիրքը

3. կապակցման միջոցը գերադաս նախադասության հետ:

Առանձնացված օրինակների գերակշիռ մասը թարգմանության մեջ պահպանել է իր տեսակը՝ 58 : 50 հարաբերությամբ, որը կազմում է մոտ 87% : Այսպես օրինակ՝

The masses feel that drunkenness, stupidity and immorality should be their own special and that 1) if anyone of us makes an ass of himself he is poaching on their preserves. 2) When poor Southwark got into the Divorce Court, their indignation was quite magnificent.

Ստորին դասակարգի մարդիկ բնագրով հասկանում են, որ հարբեցողությունը, հիմարությունը և անբարոյականությունն իրենց արտոնություններն են, իսկ 1) եթե մեզանից որևէ մեկը տառապում է դրանով, նա խլում է նրանց իրավունքները: 2) Երբ խեղճ Սաութուորկը որոշեց կնոջից բաժանվել, նրանց վրդովմունքն ուղղակի հոյակապ էր:

1) if - եթե

2) when - երբ

Բայց հարկ է նշել, որ դիտարկված օրինակներում թարգմանության մեջ ավելի շատ պահպանվում է պայմանի պարագա ստորադաս նախադասության տեսակը: Ստորադաս նախադասության այս տեսակն իր լիարժեք, բովանդակային, իմաստաբանական արտահայտությունն է գտնում ստեղծագործության հայերեն թարգմանության մեջ՝ փոխանցելով խոսողի հաղորդակցական նպատակաուղղվածությունը՝ առանց դիրքի, կապակցման ձևի և կառուցվածքային լուրջ փոփոխությունների, ինչը չի կարելի ասել ժամանակի պարագա ստորադաս նախադասությունների մասին: Այս դեպքում մեծ թիվ են կազմում

այն երկրորդական նախադասությունները, որոնք թարգմանության մեջ վերածվում են պարզ ընդարձակ նախադասության կամ արտահայտվում դերբայական դարձվածով, իսկ երբեմն էլ փոխում իրենց դիրքը:

He was amazed at the sudden impression that his words had produced, and remembering a book that he had read when he was sixteen...

Նա հիշեց մի գիրք, որ կարդացել էր տասնվեց տարեկան հասակում:

Այս դեպքում ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը համ-դես է եկել զուտ որպես ժամանակի պարագա՝ որոշիչ ստորադաս նախադասության կազմում: Մյուս դեպքում ստորադաս նախադասությունը հայերենում արտահայտվել է դերբայական դարձվածով:

He was looking worried and when he heard Lord Henry's last remark he glanced at him, hesitated for a moment and then said...

... Լսելով Լորդ Հենրիի վերջին խոսքերը՝ արագ նայեց նրան և մի պահ տատանվելուց հետո ասաց...

Եվ, վերջապես, դիտարկենք մի օրինակ, երբ թարգմանության մեջ կատարվել է ստորադաս նախադասության դիրքի փոփոխություն:

You should have gone away when I asked you he muttered. /հետադաս/

- Երբ ես հնդդեցի, դու պետք է գնայիր, - քրթմնջաց նա: /նախադաս/

Անշուշտ կային նաև ստորադաս նախադասություններ, որոնք թարգմանության մեջ փոխել են իրենց տեսակը՝ առաջ բերելով կառուցվածքային կամ բովանդակային փոփոխություն:

The commonest thing is delightful, if one only hides it.

Ամենամանշան բանն անգամ դառնում է զմայլելի, եթե թաքցնում են:

Հարկ է նշել, որ այստեղ պայմանի և ժամանակի պարագա ստորադաս նախադասությունները գրեթե նույնանում են իրենց բովանդակությամբ, իրենց հաղորդակցական արժեքով: Ամեն դեպքում ստորադաս նախադասության տեսակը փոխված է, կապակցման միջոցը՝ նույնպես, բայց հաղորդակցական արժեքը գրեթե չի տուժել:

Ինչ վերաբերում է դիրքային փոփոխությանը, պետք է ասել, որ ընտրված օրինակների գերակշիռ մասը պահպանում է իր դիրքը՝ 90%, որն ապահովում է նյութի հաղորդակցական արժեքի ճշգրիտ փոխանցումը մի լեզվից մեկ այլ լեզու:

It can believe anything provided that it is quite incredible. /հետադաս/

... Ես կարող եմ հավատալ ամեն ինչի, եթե հատկապես երևույթն անհավանական է:

Սակայն քիչ չեն դեպքերը, երբ պահպանվում է ստորադաս նախադասության դիրքը, սակայն փոխվում է գլխավոր նախադասության կապակցման ձևը:

When she does find me out, she makes no row at all. /ժամանակ/

... Եթե պատահում է, որ մա ինձ բռնում է հանցանքի մեջ, ո՛չ բարկանում է և ո՛չ էլ աղմկում: /պայման/

Ինչպես տեսնում ենք, այս օրինակում փոխվել է կապակցման միջոցը՝ անգլերենում՝ *when*, հայերենում՝ *եթե*, որն իր հերթին հանգեցրել է ստորադաս նախադասության տեսակի փոփոխության: Մակայն միշտ չէ, որ կապի փոփոխությունն առաջ է բերում ստորադաս նախադասության տեսակի փոփոխություն:

You do anything in the world to gain reputation. As soon as you have one, you seem to want throw it away. /ժամանակ/

Փառքի տիրանալու համար անում եք ամեն ինչ, իսկ երբ ձեռք եք բերում, սկսում եք կարծես նեղվել ու ձանձրանալ այդ փառքից /ժամանակ/:

Երբեմն առանց դիրքային փոփոխության դիտվում է նախադասության տիպի փոփոխություն՝ ըստ հաղորդակցման նպատակի. պայմանի ստորադաս նախադասությունը թարգմանվում է հրամայական կառույցի օգնությամբ:

If one puts forward an idea to a true Englishman, he never dreams of considering whether the idea is right or wrong.

Փոռծի՛ղ մի միտք արտահայտել իսկական անգլիացու առաջ, մա երբեք չի էլ մտածի հասկանալ՝ այդ միտքը ճիշտ է, թե սխալ:

Իհարկե, դիրքային փոփոխություններ նույնպես հանդիպել են, որի հետևանքով փոխվել է թեմա - ռեմային կապը, խոսողի հաղորդակցական միտումը:

If Dorian wishes it, of course you must stay. Dorian's whims are laws to everybody except himself. /նախադաս/

Իհարկե, մնա՛, եթե Դորիանն ուզում է: Նրա քմահաճույքներն օրենք են բոլորի համար, բացի իրենից: /հետադաս/

Մնացած դեպքերում դիրքային փոփոխությունն առաջացել է կառուցվածքային փոփոխության արդյունքում, երբ ստորադաս նախադասությունը վերածվել է պարզ ընդարձակ նախադասության կամ արտահայտվել դերբայական դարձվածով:

Առավել բազմազան ու հետաքրքիր են այն դեպքերը, երբ փոխվում կամ պահպանվում է երկրորդական նախադասության կապակցման ձևը, որի հետևանքով դիտվում է ստորադաս նախադասության տեսակի, երբեմն էլ նախադասության տեսակի, երբեմն էլ կառուցվածքի փոփոխություն, այսինքն՝ բարդ ստորադասականը վերածվում է բարդ համադասական նախադասության: Դիտարկենք մանատիպ օրինակ.

If they know nothing of victory, they are at least spared the knowledge of defeat.

Նրանց վիճակված չէ զգալ հաղթության բերկրանքը, քաղց դրա փոխաբեն գեթ են մաև պարտության դառնությունից:

Իհարկե, այստեղ մեծ դեր է խաղացել «փոխարեն» կապը, որը «բայց» շաղկապի հետ միասին ստեղծել է հակադրության տրամադրություն՝ փոխանցելով բնագրի հաղորդակցական արժեքը:

Հանդիպել են դեպքեր, երբ կապն ընդհանրապես զեղչվել է՝ առաջացնելով անշաղկապ համադասական նախադասություն:

When our eyes met, I felt that I was growing pale. /Ժամանակի/

Սեր աչքերը հանդիպեցին իրար, զգացի, որ գունատվում եմ:
/անշաղկապ/

Ինչպես նշվեց, կապակցման ձևի փոփոխության արդյունքում կարող է դիտվել ստորադաս նախադասության տեսակի փոփոխություն, բայց հատկապես ուշադրության արժանի է այն դեպքը, երբ պահպանվել է կապը, բայց փոխվել է ստորադաս նախադասության տեսակը:

... and I can't bear him when he sulks /Ժամանակ/

... ես տանել չեմ կարող, երբ նա մռայլ է: /խնդիր ստորադաս նախադասություն/

Իհարկե, այստեղ ակնհայտ է հեղինակի սուբյեկտիվ մոտեցումը, ինչպես նաև լեզուների շարահյուսական նրբությունները: Հմարավոր էր պահպանել ստորադաս նախադասության տեսակը հայերենում՝ վերականգնելով բնագրի բոլոր բաղադրիչները՝ *ես տանել չեմ կարող նրան, երբ նա...*, սակայն մի կողմից հաղորդակցական արժեքի ճիշտ ընկալման, մյուս կողմից հայոց լեզվին բնորոշ քերականական, շարահյուսական կառուցվածքի պահպանման միտումով կատարվել է ստորադաս նախադասության տեսակի փոփոխություն: Հաշվի է առնվել նաև խոսքի ոճական նկատառումները, մտքի զեղեցիկ ձևակերպումը, բարեհնչյունությունը, ինչպես նաև դերանունների կրկնությունից խուսափելու ցանկությունը:

Այսպիսով՝ կարելի է կատարել որոշակի եզրահանգումներ այն խնդրի շուրջ, թե ինչ միտում կամ հակվածություն կա ստորադաս նախադասության այս կամ այն տեսակը անգլերենից հայերեն թարգմանելիս: Պարզվեց, որ տվյալ ստեղծագործության հայերեն թարգմանության մեջ մեծ մասամբ պահպանվել է ստորադաս նախադասության տեսակը՝ 87%, դիրքը՝ 90%, ավելի քիչ էին կապակցման միջոցների պահպանման դեպքերը՝ 74%:

Կատարված ուսումնասիրության վիճակագրական տվյալներն արտահայտենք փոքրիկ աղյուսակի տեսքով, որտեղ ամփոփված են բնագրից հայերեն թարգմանության ընթացքում ստորադաս նախադասությունների պահպանման դեպքերն՝ ըստ իրենց տեսակի, դիրքի և կապակցման միջոցների

տեսակ	87%
դիրք	90%
կապակցման միջոց	74%

Նշենք, որ վիճակագրության մեջ առանձնացված են այն դեպքերը, երբ բնագրում տեղ գտած ստորադաս նախադասությունները հայերեն թարգմանու-

թյան մեջ պահպանվել են որպես այդպիսին՝ փոխելով կամ պահպանելով իրենց դիրքը, տեսակը կամ կապակցման միջոցները: Մնացած դեպքերում ստորադաս նախադասությունները հայերեն թարգմանության մեջ ենթարկվել են որոշակի փոփոխությունների վերածվել են պարզ ընդարձակ նախադասության կամ արտահայտվել դերբայական դարձվածով, երբեմն բարդ համադասական նախադասությամբ:

Իհարկե, այս փոփոխությունները հետապնդում են մեկ նպատակ՝ իմաստի, բովանդակության, տրամադրության, հաղորդակցական արժեքի ճշգրիտ, լիարժեք փոխանցում մի լեզվից մեկ այլ լեզու: Ամեն դեպքում ցանկացած փոփոխություն, լինի դա ստորադաս նախադասության տեսակի, դիրքի թե կապակցման ձևի բերում է կառուցվածքային, հետևաբար նաև բովանդակային, իմաստային փոփոխությունների: Արդյունքում փոխվում է նաև հեղինակի հաղորդակցական մտադրությունը, ինչպես նաև ընթերցողի կողմից այդ մտադրության ընկալումը: Այստեղ կարևորվում է նաև թարգմանչի անձնական, սուբյեկտիվ մոտեցումը, նրա կողմից տեքստի յուրովի ընկալումը և մեկնաբանումը: Թարգմանիչը ձգտում է հասնել հաղորդվող մտքի առավել ընդգրկուն արտահայտմանը՝ կարևորելով կառուցվածքների ճիշտ ընտրությունը, հաշվի առնելով 2 լեզուների կառուցվածքային, իմաստաբանական, քերականական և շարահյուսական առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Backlund I. Conjunction Clauses in English. Stockholm, 1984.
2. Chafe W. Meaning and Structure of language. Chicago - London, 1984.
3. Firbas J. Some Aspects of the Czechoslovak Approach to Problems of Functional Sentence Perspective. Papers on Functional Sentence Perspective, by F. Danes, 11-37, Prague. Academia, 1974
4. Hajicova E. The Meaning of Sentence in its Semantic and Pragmatic Aspects. Prague Academia, 1986.
5. Miller T. Functional Approaches to Written Text. Washington, 1997.
6. Ramsay V. Preposed and Postposed if and when clauses 1988.
7. Thomson A. S. Subordination in Formal and Informal Discourse, 1983.
8. Верховская И.П. Видо-временные формы в английском сложноподчиненном предложении. Москва, 1980.
9. Чубарян А.Э. Синонимия временных синтаксических конструкций в современном английском языке. Ереван, 2006.
10. Պառնասյան Ն.Ա. Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում: Եր, 1970:
11. Պառնասյան Ն. Ա. Ստորադասական կապակցություններն արդի հայերենի բարդ նախադասություններում: Երևան 1961:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12. Oscar Wilde The Picture of Dorian Gray. Penguin Popular Classics, 1994.
13. Օսկար Ուայլդ, Դորիան Գրեյի դիմանկարը: /թարգմ. Ռ. Ստաքեյան/, Երևան, 1972: